ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

հուլիսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԱՅԳԵՏԱՐԱԾՔԻ 2-ՐԴ ԶԱՆԳՎԱԾԻ 47-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ №32 ՏԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Էրեբունի այգետարածքի 2-րդ զանգվածի 47-րդ թաղամասի №32 տան (այսուհետ՝ Առանձնատուն) սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացումն առանց միացման վճարի գանձման իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն ներկայացված՝ քաղաքացի Լիանա Խոջումյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի հունիսի 18-ի դիմումը,

բ) Միասնական սոցիալական ծառայության Էրեբունու և Նուբարաշենի տարածքային կենտրոնի 2021 թվականի հունիսի 17-ի №Ե/387 տեղեկանքը, ըստ որի՝ Դիմող անձը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և նրա ընտանիքի անապահովության միավորը կազմում է 41.17,

գ) Դիմող անձի ներկայացրած՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը, որի համաձայն՝ Դիմող անձը Առանձնատան սեփականատերն է,

դ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հուլիսի 12-ի №Ե-337-21 և Դիմող անձի 2021 թվականի հուլիսի 21-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս առարկություն չունեն Առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու դեպքում միացման վճար չի գանձվում.
2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
հուլիսի 2021 թ.